— Առաջ նա պարապում էր գիտութեամբ, — պատասխանեց Ասլանը: — Նա լաւ բնագէտ է եւ մաթեմատիկոս: Բայց յետոյ թողեց գիտութիւնը:

— Ինչո՞ւ թողեց:

— Նրա կարծիքով, մենք, հայերս, այնքան փոքր թոով պատրաստի մարդիկ ունենք, որ մենք պէտք է խնայենք մեր ուժերը աւելի կարեւոր պահանջների համար: Եւրոպայում հազարաւոր մարդիկ զբաղոած են գիտութիւնով, նոր հետազօտութիւններ են անում, նոր գիւտեր են անում, եւ իւրաքանչիւր տարի գիտութիւնը հարստանում է բազմաթիւ նոր հրատարակութիւններով: Մենք կարող ենք նրանց պատրաստած գրքերը թարգմանել կամ փոխադրել մեր լեզոով: Գիտութիւնը ամէն ազգի համար նոյնն է մնում: Բայց կայ մի բան, որ Եւրոպան չէ կարող մեզ տալ, որը մենք ինքներս պէտք է ստեղծենք:

— Ի՞նչ բան է այդ, — հարցրի ես հետաքրքրութեամբ:

— Ազգային բանաստեղծութիւնը, որ ամէն ազգ ինքը պէտք է ստեղծէ, — պատասխանեց նա, խմելով իր բաժակի մնացած մասը: — Համրը թողեց գիտութիւնը եւ սկսեց բանաստեղծութեամբ պարապել: Նա բնական տաղանդ ունէր եւ թեթեւ, սահուն լեզու: Գրում էր ոտանաւորներ, գրում էր զանազան պատկերներ, գրում էր եւ վէպեր: Նրա աշխատութիւններից մի քանիսը տպոեցան, եւ կարդացւում էին մեծ ախորժանոք: Բայց շատերը անտիպ մնացին եւ գրաւոեցան նրա կալանաւորոելու միջոցին:

— Ոչնչացրի՞ն

— Ո՞վ է իմանում: Բայց մենք զրկոեցանք մի բանաստեղծ-վիպասանի ամենագեղեցիկ վաստակներից: Դա առաջինն էր մեր մէջ, որ թողեց երեւակայական աշխարհը եւ իր բանաստեղծութիւններին նիւթ ընտրեց իրական կեանքը եւ նրա պէտքերը: Դա առաջինն էր մեր մէջ, որ իր վէպերի մէջ սկսեց նկարագրել ճնշոած, հարստահարոած մարդու թշոառութիւնները: Դա առաջինն էր մեր մէջ, որ մի կողմ ձգեց վարձկան-բանաստեղծի շողոքորթող բուրվառը, որ դարերով խնկարկում էր մեծատունին եւ հզօրին, եւ սկսեց երգել շինականի աղքատ խրճթի տառապանքները:

Ես կրկին ածեցի նրա բաժակը: Նա շարունակեց.

— Ես մասամբ արդարացնում եմ Համրի կարծիքը բանաստեղծութեան մասին, թէեւ նա միակողմանի է: Իրաւ է, բանաստեղծութիւնը եւ առհասարակ բոլոր գեղարոեստական գրոածքները՝ ազգի թէ՛ ոգեւորողը եւ թէ՛ ղեկավարողը պէտք է լինեն: Գիտութիւնը չոր ու ցամաք սնունդ է տալիս մարդկանց մտքերին, բայց բանաստեղծութիւնը կենդանացուցիչ սնունդ է